22
ՓԵՏՐՎԱՐԻ
2022

Luys Լույս®

ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՁԱԽՈՂՈՒՄԸ. ԻՆՉՈ՞Ւ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԻՆ ՈՐՈՇ ՀԱՅԱՆՊԱՍՏ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՁԱԽՈՂՈՒՄԸ. ԻՆՉՈ՞Ւ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԻՆ ՈՐՈՇ ՀԱՅԱՆՊԱՍՏ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 1

1. «ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ..... 1

2. «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ..... 7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական Խորհրդարանը 2022թ. փետրվարի 17-ին հաստատեց երկու կարևոր փաստաթուղթ՝ «Անվտանգության և պաշտպանության ընդհանուր քաղաքականության իրականացման մասին» և «Արտաքին և անվտանգային ընդհանուր քաղաքականության իրականացման մասին» 2021 թվականի տարեկան հաշվետվությունները: Սույն հոդվածի շրջանակներում փորձել ենք դրանք համեմատել 2020-ին հաստատված համանուն փաստաթղթերի հետ և առանձնացնել դրանցում առկա՝ Հայաստանին վերաբերելի առանցքային տարբերությունները: Արձանագրել ենք, որ թեև 2021թ. փաստաթղթերում պահպանվել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ որոշ հայանպաստ ձևակերպումներ, սակայն, ընդհանուր առմամբ, նոր փաստաթղթերից դուրս են մնացել նախորդ տարվա փաստաթղթերում տեղ գտած և Հայաստանի համար կարևորություն ներկայացնող մի շարք առանցքային ձևակերպումներ:

1. «ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Նախ անդրադառնանք ԵՄ արտաքին քաղաքականության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող «Արտաքին և անվտանգային ընդհանուր քաղաքականության իրականացման մասին» 2021թ. հաշվետվությանը[1], որտեղ հնարավոր է եղել պահպանել Հայաստանի շահերից բխող որոշ շեշտադրումներ: Ի տարբերություն «Անվտանգության և պաշտպանության ընդհանուր քաղաքականության» մասին հաշվետվության՝ այս փաստաթուղթը անդրադարձ է կատարում Արցախյան հակամարտությանը և պարունակում է մի շարք ուշագրավ ձևակերպումներ: Սա հիմնականում հնարավոր է եղել ընդդիմադիր գործիչների և Եվրոպայում հայկական համայնքի որոշ ներկայացուցիչների գործադրած ջանքերի, նրանց միջազգային կապերի և հեղինակության շնորհիվ: Մասնավորապես, փաստաթղթում տեղ են գտել Արցախի վերաբերյալ կարևոր շեշտադրումներ՝ ինքնորոշման իրավունքի, ուժի չկիրառման, ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ որպես

[1] European Parliament resolution of 17 February 2022 on the implementation of the common foreign and security policy - annual report 2021, https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2022-0039_EN.html (այցելվել է 20.02.2022թ.):

հակամարտության կարգավորման հարցում միակ միջազգայնորեն ճանաչված ձևաչափի մասին և այլն:

Այսպես, 2021թ. փաստաթղթում Արցախյան հակամարտությանը նվիրված առանձին պարբերություն չկա, հիմնախնդրին անդրադարձ է կատարվում 43-րդ պարբերության մեջ, որտեղ խոսվում է նաև ռուս-վրացական հակամարտության մասին՝ շեշտելով աջակցությունը Վրաստանի տարածքային ամբողջականությանը: Արցախյան հակամարտության վերաբերյալ մասնավորապես ԵՄ-ին կոչ է արվում.

« - ակտիվորեն ներգրավվել Լեռնային Ղարաբաղի հարցով Հայաստանի և Ադրբեջանի միջև կայուն կարգավորում գտնելու և տարածաշրջանում լարվածության հետագա սրումը կանխարգելելու գործում**, մասնավորապես Ադրբեջանի և Հայաստանի նկատմամբ ճնշում գործադրելով՝ լուծելու հետպատերազմյան խնդիրները՝ ներառյալ սահմանների դեմարկացիան և մնացած բոլոր ռազմագերիների ազատ արձակումը»:**

Նշվում է, որ.

- «**ԵԱՀԿ Մինսկի խումբը շարունակում է մնալ միակ միջազգայնորեն ճանաչված ձևաչափը այս հակամարտության կարգավորման համար**՝ հիմնված տարածքային ամբողջականության, **ուժի չկիրառման, ինքնորոշման և իրավահավասարության, հակամարտությունների խաղաղ կարգավորման սկզբունքների վրա»:**

Վերջինիս կոչ է արվում արագ վերադառնալ իր միջնորդական դերին:

Ինչպես տեսնում ենք, փաստաթղթում հնարավոր է եղել պահպանել բոլոր ռազմագերիների ազատ արձակման պահանջը, ինչը կարող է կարևոր նշանակություն ունենալ հետագայում եվրոպական հարթակներում Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու տեսանկյունից: Արցախյան բանակցային գործընթացում հայկական կողմի շահերի պաշտպանության տեսանկյունից կարևոր է փաստաթղթում տեղ գտած ձևակերպումը հակամարտության կարգավորման վերաբերյալ՝ հիմնված այդ թվում ազգերի ինքնորոշման և իրավահավասարության սկզբունք վրա: Վաղուց որևէ լուրջ միջազգային կառույց ԼՂ հակամարտությանն անդրադառնալիս չի օգտագործում հակամարտության կարգավորման վերաբերյալ այս առանցքային սկզբունքը, ուստի այս հարցում ԵՄ դիրքորոշման վերահաստատումը նույնպես կարելի է դիտարկել որպես մեզ համար դրական ազդակ: Կարևոր է նաև ուժի չկիրառման և

հակամարտությունների խաղաղ կարգավորման շեշտադրումը՝ ոչ միայն Ադրբեջանի նախորդ ագրեսիվ գործողությունները ԵՄ շրջանակներում պարբերաբար բարձրաձայնելու, այլև հետագա սադրանքները կանխարգելելու տեսանկյունից: Չնայած ադրբեջանական կողմի համառ ջանքերին, այդ թվում՝ Բրյուսելում Ադրբեջանի դեսպանի կողմից միջամտության փորձերին՝ հաջողվել է փաստաթղթում պահպանել այս կարևոր ձևակերպումները՝ հիմնականում Հայաստանի ընդդիմադիր գործիչների ջանքերի և միջազգային կապերի շնորհիվ:

Այնուամենայնիվ, չնայած Արցախյան հակամարտության վերաբերյալ վերոհիշյալ օբյեկտիվ գնահատականների առկայությանը, 2020-ի համանուն փաստաթղթի[2] նկատմամբ նկատվում է որոշակի հետընթաց՝ մեզ համար շահեկան ձևակերպումների տեսանկյունից: Այստեղ հարկ է նշել, որ որքան էլ կարևոր է անհատների և ընդդիմադիր գործիչների աշխատանքը եվրոպացի գործընկերների հետ, այն չի կարող փոխարինել պետությանն ու պաշտոնական դիվանագիտությանը: Իսկ դրանց պասիվությունն ու ապիկարությունը հանգեցրել է նրան, որ նախորդ տարվա փաստաթղթի համեմատ, այս անգամ փաստաթղթից դուրս են մնացել մի շարք կարևոր շեշտադրումներ:

Այսպես, խոսելով հետպատերազմյան խնդիրների մասին, նշվում է միայն ռազմագերիների ազատ արձակման հարցը, ինչպես նաև անդրադարձ է կատարվում Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանների դեմարկացիային, ինչը Արցախյան հակամարտության հետ ուղղակի առնչություն չունի: Փոխարենը որևէ խոսք չկա Ադրբեջանի և Թուրքիայի ագրեսիայի, պատերազմի հետևանքով տեղահանվածների վերադարձի, մշակութային ժառանգության պաշտպանության և այլ կարևոր հետպատերազմական մարտահրավերների մասին: 2020թ. փաստաթղթում Արցախյան հակամարտությանը նվիրված էր մի ամբողջ ծավալուն պարբերություն: Մեկ այլ պարբերություն մանրամասն անդրադառնում էր Լեռնային Ղարաբաղի հարցում Թուրքիայի ապակառուցողական քաղաքականությանը:

Այսպես, նախ 2020թ. փաստաթղթի 23-րդ կետում նշվում է, որ ԵՄ-ն պետք է ակտիվացնի իր գործողությունները այսպես կոչված սառեցված հակամարտությունների խաղաղ կարգավորման հարցում և այս համատեքստում հղում է կատարվում նաև 1975թ. Հելսինկյան ակտի նորմերի և սկզբունքների վրա՝

[2] European Parliament resolution of 20 January 2021 on the implementation of the Common Foreign and Security Policy – annual report 2020, https://www.europarl.europa.eu/doceo/document/A-9-2020-0266_EN.html (այցելվել է 20.02.2022թ.):

որը ենթադրում է նաև ազգերի ինքնորոշման սկզբունքը: Փաստաթղթում մի ամբողջ պարբերություն՝ 24-րդ կետը, նվիրված էր Արցախյան հակամարտությանը: Մասնավորապես.

« - Ափսոսանք է հայտնում, որ ստատուս քվոյի փոփոխությունը տեղի է ունեցել ռազմական ուժի, այլ ոչ թե խաղաղ բանակցությունների միջոցով:

- Խստորեն դատապարտում է խաղաղ բնակիչների սպանությունը և քաղաքացիական օբյեկտների ու պաշտամունքի վայրերի ոչնչացումը, դատապարտում է հակամարտությունում կասետային զինամթերքի կիրառումը: Կոչ է անում Հայաստանին և Ադրբեջանին անհապաղ վավերացնել կասետային զինամթերքի մասին կոնվենցիան, որը համակողմանիորեն արգելում է դրանց կիրառումը:

- Ընդգծում է, որ դեռ պետք է հասնել հարատև կարգավորման, և որ խաղաղության հասնելու և տարածաշրջանի ապագա իրավական կարգավիճակի որոշման գործընթացը պետք է առաջնորդվի Մինսկի խմբի համանախագահների կողմից և հիմնված լինի խմբի հիմնարար սկզբունքների վրա:

- Ընդգծում է տուժածներին մարդասիրական օգնության տրամադրումը, Լեռնային Ղարաբաղում հայ բնակչության և նրա մշակութային ժառանգության անվտանգությունը, ներքին տեղահանվածներին և փախստականներին իրենց նախկին բնակության վայրեր վերադառնալու թույլտվությունն ապահովելու հրատապ անհրաժեշտությունը:

- կոչ է անում պատշաճ կերպով հետաքննել ռազմական հանցագործությունների վերաբերյալ բոլոր մեղադրանքները և պատասխանատվության ենթարկել մեղավորներին:

- ԵՄ-ին կոչ է անում ավելի բովանդակալից ներգրավվել հակամարտության կարգավորման գործում և տարածաշրջանի ճակատագիրը չթողնել այլ տերությունների ձեռքում»:

Ինչպես տեսնում ենք, նախորդ փաստաթղթում հիմնականում հաշվի էին առնված հայկական կողմի շահերն ու մտահոգությունները, և այդ տեսանկյունից առկա էին բավականաչափ կարևոր շեշտադրումներ: Դրանց թվում կարելի է առանձնացնել մտահոգությունը ռազմական ճանապարհով ստատուս քվոյի

փոփոխության վերաբերյալ, Մինսկի խմբի դերակատարության և հիմնարար սկզբունքների կարևորումը, ԼՂ բնակչության և մշակութային ժառանգության պաշտպանության, մարդասիրական օգնության անհրաժեշտության շեշտադրումը և այլն: Ի տարբերություն նոր փաստաթղթի՝ նախորդ փաստաթուղթը դատապարտում էր խաղաղ բնակչության և պաշտամունքի օբյեկտների թիրախավորումը, իսկ բոլորին հայտնի է, որ հենց Ադրբեջանն էր թիրախավորել այդպիսի օբյեկտներ՝ Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցի, Ստեփանակերտի ծննդատուն և այլն: Մեկ այլ կարևոր շեշտադրում՝ կասետային ռումբերի կիրառման մասին, որոնք Ադրբեջանը լայնորեն օգտագործում էր 44-օրյա պատերազմի ընթացքում, նույնպես նոր փաստաթղթում բացակայում է: Նույնը կարելի է ասել Ադրբեջանի կողմից պատերազմական հանցագործությունների հետաքննության անհրաժեշտության մասին:

2021թ. փաստաթղթում որևէ հիշատակում չկա 44-օրյա պատերազմի ժամանակ Թուրքիայի ապակառուցողական վարքագծի և ակտիվ ներգրավվածության մասին, մինչդեռ նախորդ փաստաթղթում այդ խնդրին նվիրված էր մի ամբողջ պարբերություն: Օրինակ 2020թ. զեկույցի 32-րդ կետում ընդգծվում էր Թուրքիայի ագրեսիվ մասնակցությունը մի շարք հակամարտություններում, այդ թվում՝ Արցախյան հակամարտությունում: Իսկ 37-րդ կետը նվիրված էր Հարավային Կովկասում Թուրքիայի ապակառուցողական դերակատարությանը.

« - Խստորեն դատապարտում է Թուրքիայի ապակայունացնող դերը, որն էլ ավելի է խաթարում փխրուն կայունությունը ողջ Հարավային Կովկասի տարածաշրջանում:

- Թուրքիային կոչ է անում զերծ մնալ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը ցանկացած միջամտությունից, այդ թվում՝ Ադրբեջանին ռազմական աջակցություն առաջարկելուց, և հրաժարվել ապակայունացնող գործողություններից և ակտիվորեն նպաստել խաղաղությանը:

- Դատապարտում է Թուրքիայի կողմից Սիրիայից և այլ վայրերից Լեռնային Ղարաբաղ օտարերկրյա ահաբեկիչների տեղափոխումը, ինչը հաստատվել է միջազգային դերակատարների, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների կողմից:

- ափսոսում է ԵԱՀԿ Մինսկի խումբը ապակայունացնելու վերջինիս (Թուրքիայի) ձգտման համար՝ կապված հակամարտությունում ավելի վճռական դեր խաղալու վերջինիս ցանկության հետ»:

Ըստ էության, նախորդ հայտարարության մեջ Թուրքիայի վերաբերյալ բոլոր դիտարկումները բխում էին հայկական կողմի շահերից և կարող էին կարևոր գործիք դառնալ Թուրքիայի դեմ միջազգային ճնշումն ուժեղացնելու տեսանկյունից: Մասնավորապես, Թուրքիան դիտարկվում էր որպես Հարավային Կովկասը ապակայունացնող դերակատար, դատապարտվում էր թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը, ընդգծվում էր թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից ահաբեկիչների ներգրավումը Արցախում և դատապարտվում ՄԽ ապակայունացնելու Թուրքիայի փորձերը:

Բնականաբար, այս շեշտադրումները ԵՄ համար ներկայումս արդիական չեն, քանի որ Հայաստանն ինքն է համաձայնել Թուրքիայի և Ադրբեջանի հետ 3+3 ձևաչափին, որը նույնպես միտված է ԵԱՀԿ ՄԽ դերակատարության նվազեցմանը: Հայաստանը Թուրքիայի հետ «խաղաղության դարաշրջան» է բացում, ուստի ԵՄ-ն, հավանաբար դրան չխանգարելու նպատակով, այլևս չի հիշատակում Հարավային Կովկասում Թուրքիայի ագրեսիվ դերակատարության մասին: 2021-ին՝ ի դեմս այսպես կոչված «Շուշիի հռչակագրի», Թուրքիան և Ադրբեջանը ավելի են խորացրել ռազմական համագործակցությունը, սակայն ԵՄ-ն այլևս մտահոգություն չի հայտնում Թուրքիայի կողմից Ադրբեջանին տրվող ռազմական աջակցության կապակցությամբ: ԵՄ այս մոտեցումը բնական է, եթե հաշվի առնենք, որ նույնիսկ Հայաստանի իշխող խմբակցությունն է հրաժարվում խորհրդարանում վավերացնել «Շուշիի հռչակագիրը» դատապարտող հայտարարությունը: Դե իսկ ահաբեկիչների ներգրավման մասին տևական ժամանակ է, ինչ լռում է նույնիսկ պաշտոնական Երևանը, հետևաբար այդ հանգամանքը այլևս չհիշատակելու՝ ԵՄ մոտեցումը նույնպես տրամաբանական է:

2. «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպական Խորհրդարանի կողմից հաստատված մեկ այլ կարևոր փաստաթուղթ է «Անվտանգության և պաշտպանության ընդհանուր քաղաքականության իրականացման մասին» հաշվետվությունը[3]: Եթե նախորդ փաստաթղթի ուղղությամբ, այնուամենայնիվ, հաջողվել էր որոշակի աշխատանք տանել և պահպանել Արցախյան հակամարտության վերաբերյալ որոշ կարևոր շեշտադրումներ, ապա այս փաստաթուղթը առհասարակ անուշադրության է մատնվել մեր դիվանագետների կողմից:

Այսպես, ի տարբերություն 2020թ. համանուն փաստաթղթի[4], որտեղ առկա էին մի շարք հայանպաստ ձևակերպումներ, առաջին հերթին՝ Արցախյան հակամարտության և Թուրքիայի ապակառուցողական վարքագծի մասով, նոր փաստաթղթում այդպիսի ձևակերպումները շատ թույլ են կամ առհասարակ բացակայում են: 2021թ. փաստաթղթում անդրադառնալով ռուս-վրացական և ռուս-ուկրաինական հակամարտություններին՝ նշվում է, որ ԵՄ-ն «վերահաստատում է իր անսասան աջակցությունը ԱլԳ երկրներին և, մասնավորապես, նրանց անկախությանը, ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանը՝ միջազգայնորեն ճանաչված սահմաններում»: Թեև 2020-ի փաստաթղթում ևս նշվում էր ԵՄ աջակցությունը տարածքային ամբողջականությանը, սակայն այնտեղ առանձնակի շեշտադրվում էր Ուկրաինայի պարագան, և բացակայում է «միջազգայնորեն ճանաչված սահմաններ» եզրույթը: Այնուամենայնիվ, երկու դեպքում էլ անդրադարձ չի կատարվում ազգերի ինքնորոշման սկզբունքին:

2020-ի փաստաթղթում առանձին անդրադարձ էր կատարվում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին: Մասնավորապես, փաստաթղթում ներառված էին մի շարք կարևոր թեզեր: Նշվում էր, որ ԵՄ-ն.

---

[3] European Parliament resolution of 17 February 2022 on the implementation of the Common Security and Defence Policy – annual report 2021 , https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2022-0040_EN.html (այցելվել է 20.02.2022թ.):

[4] European Parliament resolution of 20 January 2021 on the implementation of the Common Security and Defence Policy - annual report 2020, https://www.europarl.europa.eu/doceo/document/A-9-2020-0265_EN.html (այցելվել է 20.02.2022թ.):

«- Ողջունում է ռազմական գործողությունների դադարեցումը Լեռնային Ղարաբաղում և հարակից շրջաններում:

- Մտահոգությամբ ընդգծում է երրորդ երկրների ռազմական ներգրավվածությունը հակամարտությունում և հատկապես Թուրքիայի ապակայունացնող դերն ու միջամտությունը:

- Կոչ է անում միջազգային հետաքննություն անցկացնել օտարերկրյա գրոհայինների ենթադրյալ ներկայության և կասետային զինամթերքի և ֆոսֆորային ռումբերի օգտագործման վերաբերյալ:

- կոչ է անում Եվրամիությանը և միջազգային մարմիններին ապահովել, որ Լեռնային Ղարաբաղում ռազմական հանցագործությունների և Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընթացքում արգելված զենքի կիրառման համար անպատժելիությունը բացառվի:

- Պնդում է մարդասիրական օգնության մուտքի թույլտվության, գերիների և զոհերի փոխանակման, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության պահպանման անհրաժեշտությունը»:

Ինչպես տեսնում ենք, 2020-ի փաստաթղթում Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ առկա էին մի շարք ձևակերպումներ, որոնք ճիշտ օգտագործելու պարագայում հայկական դիվանագիտությունը կարող էր եվրոպական մայրաքաղաքներում կարևոր ձեռքբերումներ գրանցել: Սակայն նախորդ մեկ տարվա ընթացքում պաշտոնական Երևանն ու Հայաստանի խորհրդարանական դիվանագիտությունը այդպես էլ չկարողացան կապիտալիզացնել այս ձևակերպումները: 2021-ի փաստաթղթում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին առհասարակ անդրադարձ չկա, իսկ Հարավային Կովկասում Անկարայի ագրեսիվ քաղաքականությունը և մասնակցությունը 44-օրյա պատերազմին անտեսված են: Եվ սա պատահական չէ. ինչո՞ւ պետք է ԵՄ-ն կրկին դատապարտի Թուրքիայի ապակառուցողական դերն ու միջամտությունը 44-օրյա պատերազմին, եթե ՀՀ իշխանություններն այս հարցում հետևողական չեն, Անկարան ու Երևանը փոխադարձ «դրական ազդակներ» են ուղղում միմյանց, իսկ հայ պաշտոնյաների բառապաշարում բացակայում են Թուրքիայի գործողությունները դատապարտող տեքստերը: Նման իրավիճակում ԵՄ կողմից Թուրքիայի նկատմամբ քննադատությունը ոչ ոքի համար ընկալելի չի լինի:

Բացի այդ, Հայաստանի արտգործնախարարությունը և արտաքին քաղաքականությամբ զբաղվող հիմնական կառույցներն ու պաշտոնատար անձինք նախորդ մեկ տարում մոռացության են մատնել 44-օրյա պատերազմի ընթացքում օտարերկրյա ահաբեկիչների և արգելված զինատեսակների կիրառման խնդիրները, դրանց մասին հիշատակումները բացակայում էին ԱԳ նախարարի, վարչապետի, ԱԺ նախագահի միջազգային ելույթներում և հայտարարություններում: Սա բնական է, քանի որ այդ խնդիրների բարձրաձայնումը չի տեղավորվում Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունները կարգավորելու և «խաղաղության դարաշրջան» բացելու՝ գործող իշխանությունների կողմից առաջ քաշված կեղծ օրակարգում: Այս իմաստով միջազգային կառույցները, այդ թվում՝ ԵՄ-ն, հավանաբար հավատարիմ են մնացել «չխանգարելու» սկզբունքին և թարմացված փաստաթղթերում ուղղակի հետքայլ են կատարել նախորդ տարվա իրենց սկզբունքային դիրքորոշումներից: Նույնը կարելի է ասել նաև ռազմական հանցագործությունների և գերիների, մշակութային ժառանգության պահպանման խնդիրների վերաբերյալ: Այս հարցում նույնիսկ Հայաստանի ՄԻՊ-ի գնահատականները արժանանում են գործող իշխանությունների քննադատությանը, հետևաբար ինչո՞ւ պետք է եվրոպական կառույցները ավելի շահագրգիռ մոտեցում ցուցաբերեն:

Կարևոր է նաև, որ 2020թ. փաստաթղթում ԵՄ-ն պնդում էր Արցախում մարդասիրական օգնության մուտքի թույլտվության հարցը: Սակայն, ինչպես գիտենք, այս ուղղությամբ շոշափելի հաջողություններ չեն գրանցվել: Ավելին, ՀՀ իշխանություններն իրենք են խուսափում բարձր մակարդակով այցեր կատարել Լեռնային Ղարաբաղ, իսկ այդպիսի այցեր կատարած պաշտոնյաները կարճ ժամանակ անց հեռացվում են: Նման պարագայում անհասկանալի է, թե ինչպես պետք է լուծեն միջազգային մարդասիրական օգնության մուտքի թույլտվության հարցը: Ակնհայտ է, որ պետության այսպիսի դիրքորոշման և քաղաքականության պայմաններում միայն ընդդիմության և անհատ գործիչների ջանքերը չեն կարող էական ազդեցություն ունենալ ԵՄ քաղաքականության վրա:

Որպեսզի տպավորություն չստեղծվի, թե մեկ տարում պարզապես փոխվել է ԵՄ մոտեցումը Թուրքիայի և վերջինիս խամաճիկ գործընկերոջ՝ Ադրբեջանի նկատմամբ, հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել այն փաստին, որ ինչպես 2021, այնպես էլ 2020 թվականների փաստաթղթերում Թուրքիայի հասցեին ԵՄ քննադատական գնահատականները՝ կապված Կիպրոսի հարցում և Միջերկրական ծովում Անկարայի

սանձարձակությունների հետ, ոչ միայն պահպանվել են, այլև ավելի են կոշտացել: ԵՄ-ն դատապարտում է Թուրքիայի ընդհանուր ապակայունացնող դերակատարությունը Եվրոպական միության և նրա հարևանության շրջանում, վերջինիս գործողություններում տեսնում է սպառնալիք տարածաշրջանային անվտանգության, խաղաղության և կայունության համար, Թուրքիային մեղադրում է Հունաստանի և Կիպրոսի հետ կապված ապօրինի գործողությունների և ռազմական սպառնալիքի մեջ:

Ինչպես տեսնում ենք, 2021 թվականի փաստաթուղթը՝ Հայաստանին և Արցախին վերաբերելի մասով էական հետընթաց է գրանցել՝ 2020-ի փաստաթղթի համեմատ, և սա միջազգային ասպարեզում գործող իշխանությունների դիվանագիտական ձախողումների շարքի ընդամենը մեկ, սակայն կարևոր դրվագներից մեկն է: Այնուամենայնիվ, ԵՄ ընդունած այս զեկույցը նույնպես պահպանում է որոշ գնահատականներ, որոնք հայկական դիվանագիտությունը կարող է օգտագործել ի շահ Հայաստանի և Արցախի: Խոսքը առաջին հերթին վերաբերում է արհեստական ինտելեկտի վրա հիմնված՝ ինքնավար սպառազինության համակարգերի վերաբերյալ ԵՄ գնահատականներին: Մասնավորապես, փաստաթղթում ԵՄ-ին կոչ է արվում «ստանձնել առաջնորդությունը արհեստական ինտելեկտի հիման վրա աշխատող զենքերի մշակման և օգտագործման համար համապարփակ կարգավորող շրջանակ ձևավորելու՝ գլոբալ ջանքերում»: Նշվում է, որ «անհրաժեշտ է միջազգային բանակցություններ սկսել իրավաբանորեն պարտադիր փաստաթղթի շուրջ, որն արգելում է լիարժեք ինքնավար զենքերը»:

Հայաստանը, որպես 44-օրյա պատերազմի ժամանակ այս զինատեսակներից մեծապես տուժած երկիր, կարող է միանալ այս ուղղությամբ ԵՄ կողմից գործադրվող ջանքերին՝ դրանք կապելով Ադրբեջանի և Թուրքիայի կողմից իրականացված ռազմական հանցագործությունների հետ: Սակայն դրա համար ՀՀ իշխանությունները նախ պետք է մի կողմ դնեն Թուրքիայի և Ադրբեջանի գործողություններն արդարացնելու վտանգավոր քաղաքականությանը և հրաժարվեն «խաղաղության դարաշրջան» բացելու կեղծ օրակարգից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական Խորհրդարանի կողմից հաստատված կարևոր ռազմավարական փաստաթղթերից հիմնականում դուրս են մնացել հայանպաստ ձևակերպումները: 2020թ. կործանարար պատերազմից հետո ԵՄ-ն, հավանաբար նաև պատերազմի ընթացքում իր ամոթալի պասիվության գիտակցումից ելնելով, փորձել էր պաշտպանության, անվտանգության և արտաքին քաղաքականության կարևոր փաստաթղթերում վերահիմաստավորել իր քաղաքական դիրքորոշումը՝ հանդես գալով բավական օբյեկտիվ և հայանպաստ ձևակերպումներով:

Ժամանակին ՀՀ իշխանությունները սա ներկայացնում էին որպես կարևոր դիվանագիտական ձեռքբերում, թեև դրանցում իրենց դերակատարությունը զրոյական էր: Ինչևէ, այդ ձևակերպումները կարող էին կարևոր դեր կատարել եվրոպական մայրաքաղաքներում ՀՀ շահերը առաջ մղելու, նոր հայանպաստ հայտարարություններ ստանալու տեսանկյունից: Սա հատկապես կարող էր կարևոր գործիք դառնալ խորհրդարանական դիվանագիտության ձեռքում՝ նաև հաշվի առնելով 2021-ին Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիվ գործողությունները: Սակայն ՀՀ գործող իշխանությունները ոչ միայն իրենք ի վիճակի չեն լիարժեքորեն ծառայեցնել խորհրդարանական դիվանագիտության բոլոր լծակները՝ ի շահ Հայաստանի և Արցախի, այլև այդ հարցում խոչընդոտում են խորհրդարանական ընդդիմությանը:

Ակնհայտ է, որ Եվրոպական Խորհրդարանում մեզ համար ավելի շահավետ ձևակերպումներ ստանալու առումով շատ կարևոր են հայ պատգամավորների անմիջական շփումները եվրոպացի գործընկերների հետ: Իշխանության ներկայացուցիչների գործունեության արդյունավետությունը, կամ, ավելի շուտ, դրա բացակայությունը, ակնհայտ տեսանելի է ԵՄ կողմից ընդունված փաստաթղթերում: Ինչ վերաբերում է ընդդիմադիր պատգամավորներին, ապա նրանց մեծ մասի գործուղումները արհեստական խոչընդոտներով արգելակվում են գործող իշխանությունների կողմից, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեքորեն իրացնել ՀՀ և ԼՂՀ շահերի պաշտպանության հարցում ընդդիմադիր պատգամավորների ողջ գործիքակազմն ու հնարավորությունները:

Եվրոպական Խորհրդարանի նոր փաստաթղթերում ոչ միայն որևէ անդրադարձ չկա Ադրբեջանի նոր ագրեսիային, ՀՀ ինքնիշխան տարածքների բռնազավթմանը, հայ զինվորների և քաղաքացիական բնակչության գերեվարման, խոշտանգման

փաստերին, այլև դուրս են մղվել նույնիսկ նախկինում արտահայտված սկզբունքային ձևակերպումները: Չնայած ընդդիմության և որոշ անհատների ջանքերի շնորհիվ «արտաքին և անվտանգային ընդհանուր քաղաքականության» իրականացման մասին 2021թ. հաշվետվության տեքստում հնարավոր է եղել պահպանել ԼՂ հակամարտության վերաբերյալ որոշ կարևոր դրույթներ, սակայն այս հաջողությունը ևս կարող է մսխվել գործող իշխանությունների կողմից, եթե շարունակվի այսօրվա պարտվողական արտաքին քաղաքականությունը:

ՀՀ գործող իշխանությունների սիրախաղը Անկարայի և Բաքվի հետ ակնհայտորեն թուլացրել է հայկական հարցերով Թուրքիայի ու Ադրբեջանի նկատմամբ միջազգային հանրության, այդ թվում՝ ԵՄ քննադատական դիրքորոշումը: Սա միանշանակ բխում է վերջիններիս շահերից և ավելի է ամրապնդում նրանց դիրքերը ՀՀ պարտված իշխանությունների հետ տարվող բանակցություններում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*